ՐԱՖՖԻՆ ԿՅԱՆՔՈՒՍ

Խնդրո առարկա հարցը Ռաֆֆու կեցության ու կենցաղի, խառնվածքի ու սովորույթների արտաքինից ոչ այնքան էական թվացող փաստերի քննությունն է, որով, սակայն, շատ ավելին է ասվում: Ռաֆֆու մասին պահպանվել են ժամանակակիցների հուշերը, որոնցում այս կամ այն ձևով, հաճախ նաև մշուշված հիշողությամբ հուշագիրները թողել են վկայություններ, որոնցում որքան էլ հավաստի լինեն փաստերը, այնուամենայնիվ չպիտի անտեսվի հուշագիրների սուբյեկտիվ վերաբերմունքի առկայությունը: Ռաֆֆու մասին կան հիշողություններ Պարսկաստանում ապրելու տարիներից, իսկ հուշերը գլխավորապես նրա թիֆլիսյան կյանքից են:

Ամեն ինչ սկսվում է պապենական տանից, որի մասին հուշ ունի Ռաֆֆու եղբոր՝ Տիգրանի որդին՝ Սողոմոն Մելիք-Հակոբյանը պարսկահայ գրող, լրագրող: Սողոմոնը եղել է հինգ տարեկան, երբ մահացել է Ռաֆֆին: Ուրեմն, նրա հուշերը ոչ թե անձնական տպավորությունների արդյունք են, այլ վերապատմում են լսածները, մինչդեռ պապենական տունը անկասկած Սողոմոնը տեսած պիտի լինի:

«Տունը գտնվում է Փայաջուկի կենտրոնում, շրջապատված Գդուենց և Մելիք-Հակոբյան տոհմի շառավիղների տներով: Արևմտյան գծի վրա շինված էին երկհարկ սենյակներ, որոնցից միջինը Ռաֆֆու առանձնասենյակն ու աշխատանոցն էր, որի պատերն ու առաստաղը ամբողջովին ծածկված էին յուղաներկ, գունագեղ և ոսկեզօծ զարդանկարներով, գլխավորապես ծաղիկներ և թռչուններ՝ արևելյան ճաշակով»[1]:

Նույն Սողոմոնը պատմում է, թե Ռաֆֆու աշակերտ թավրիզեցի Հարություն Դանիելյանը պատմել է իրեն մի հետաքրքիր միջադեպ Ռաֆֆու ուսուցչական գործունեությունից:

«Արամյան դպրոցի աշակերտ էի, Ռաֆֆին մեր դասատուն էր. չէր ծեծում, բայց սիրում էր երբեմն մեր մազերից քաշել, որն այնուամենայնիվ ցավ էր պատճառում: Մի օր որոշեցինք մեր մազերը տակից խուզել և հետևյալ օրը բոլորս շատ կարճ խուզած մազերով նստած էինք դասարանում և սպասում. ուրախ էինք, որ այլևս չի կարող մեր մազերից քաշել: Ներս մտավ Ռաֆֆին և նկատելով մեր խորամանկ խաղը քմծիծաղ տվեց, ապա կանչեց ընկերներիցս մեկին դաս պատասխանելու. սա մի քանի տեղ սխալվեց և կմկմաց: Ռաֆֆին հանգստությամբ ձեռքը մեկնեց. բռնեց նրա ականջից և ասաց. «Դե, հիմա էլ գնացեք ականջներդ խուզեցեք»[2]:

---

[1] Ռաֆֆին ժամանակակիցների հուշերում, Ե., 1986թ., էջ 252:
[2] Նույն տեղում, էջ 253:

Իմիջիայլոց, այս փաստի ճիշտ լինելուն վկայում է նաև Ռաֆֆու աշակերտ թավրիզաբնակ Ավետիս Սարգսյանի վկայությունը, թե «Դասի ժամանակ նստելու սովորություն չուներ, շրջում էր շարքերում: Դաս չիմացողների մազերը բռնում և թեթև քաշում էր»:

Արամյան դպրոցում ուսուցիչ եղած ժամանակ Ռաֆֆին ուներ շատ թշնամիներ, որոնք դավեր էին նյութում նրա անձի դեմ: «Հարեմ» վեպի առիթով նրան լրտեսում են պարսից կառավարիչների մոտ անվանելով նրան դավաճան: Հուշագիրներից շատերը պատմում են, թե ինչպես պատմության դասի ժամանակ ներս են մտել և քաշքշել Ռաֆֆուն: Այս տեսարանից ահաբեկված Ռաֆֆու եսքեր անունով աղջիկը վախից վախճանվում է: Այս մասին վկայում է Արամյան դպրոցի աշակերտ Մելիք-Զոհրաբյան Նազարը: Իսկ Ավետիս Սարգսյանը հիշում է նույնիսկ պատմության դասի նյութը՝ հայոց Խոսրով թագավորի սպանության և Տրդատի հոր մասին:

Մի ուշագրավ հիշողություն կա Ռաֆֆու ամուսնության շուրջ, որի հուշագիրը ոմն Սառա Խանում է, իբրև Ռաֆֆու քրոջ աղջիկ, բայց 1967թ. Ռաֆֆու քրոջ՝ Կատարինեի որդի Ղազար Ղազարյանը Թեհրանից գրած նամակում նշում է. «Ռաֆֆու տոհմում Սառա Խանում չի եղել, գոնե մենք այդպիսին չենք ճանաչում»[3]: Բայց, այսուհանդերձ, Սառա Խանումի հուշերում կան հավաստի և հետաքրքիր փաստեր Ռաֆֆու ամուսնության շուրջ:

Ուրմիայի ամերիկյան միսիոներների օրիորդաց վարժարանում շրջանավարտների հանդեսի օրը Ռաֆֆին տեսնում է շրջանավարտ Աննային, որի հայրը՝ Ղաշա Հունանը, ապրում էր Գոգ-Թափա գյուղաքաղաքում: Ըստ հուշագրի՝ այդ ժամանակ Ռաֆֆին 23 տարեկան էր, մինչդեռ Ռաֆֆին ամուսնացել է 31 տարեկանում, ըստ որում օրիորդ Աննան նշանված է եղել դոկտ. Հունանի տղայի հետ: «Հարսանիքը շատ անշուք են անում, վախենալով որևէ անախորժությունից Ռաֆֆու թշնամիների կողմից՝ նվագ և հրավիրյալներ չեն լինում»[4]:

Ռաֆֆին ունեցել է երկու տղա և մի աղջիկ՝ Եսքերը, որը 12 տարեկանում մահացել է:

Պահպանվել են Աննա Ռաֆֆու /օրիորդական անունը՝ Աննա Հյուրմուզ/ հուշերից պատառիկներ: «Անդադար կծխեր,-գրում է Աննան,-թեյ կխմեր և կգրեր: Սենյակը ծուխով լեցված կըլլար և այդ միջոցին, ծուխին ընդմեջեն, ան կերևակայեր և կվերանար՝ իր գրական արտադրանքը կատարելու»[5]: Ռաֆֆու աշխատանքի ժամանակ Աննան թույլ չէր տալիս հյուրեր այցելեն նրա սենյակը:

«Եվրոպական պիջակ և ժիլետե» հագին Հակոբ Մելիք-Հակոբյանը գալիս է Թիֆլիս՝ Մելիք-Հախնազարյանների տուն, և վարձում մի սենյակ: Երեք

---

[3] Ռաֆֆին ժամանակակիցների հուշերում, Ե., 1986թ., էջ 338:
[4] Նույն տեղում, էջ 250:
[5] Նույն տեղում, էջ 262:

տարի ապրում է այստեղ, այնուհետև տեղափոխվում Սվեչնիկովի տունը, ուր վարձել էր առանձին բնակարան: Այս տարիներին էլ ծանոթանում է Գր. Արծրունու հետ: Ռաֆֆին երկար ժամանակ աշխատակցում է «Մշակին», բայց որոշ պատճառներով ընդհարվում է Արծրունու հետ, որի մասին Ռաֆֆին գրում է մի նամակում. «Պարոն Արծրունու հետ իմ հարաբերություններն այժմ բավական լարված են. ես դադարել եմ նրանց մոտ ճաշ ուտել: Տիկնոջ ինտրիգները վերջապես, զզվեցրին ինձ: Ես դիտավորություն ունեի այս տարվա սկզբում նոր մարդիկ հրավիրել և հներին հեռացնել, որպեսզի «Մշակը» փոքրինչ կենդանանա, բայց հնար չեղավ: Տիկինը հաղթությունը տարավ, իսկ պարոն Արծրունին նրա ձեռքում դարձել է շորի կտոր...»:

Հայտնի է, որ Ռաֆֆին և Ծերենցը չեն սիրել միմյանց: Այս մասին վկայում է Շիրվանզադեն: «Ես համոզված եմ, որ Կ.Պոլսում շատ կան լրջամիտ և անկեղծ հայրենասերներ,-ասում էր Ռաֆֆին,- բայց դժբախտաբար, մինչև այժմ մեզ մոտ եկողները զեվզեկներ են եղել»: Նա ակնարկում էր որոշ մարդկանց, որոնց թվում և Ծերենցին: Ծերենցի մասին ասում էր. «Այդ հոսհոսն իրան այնպես է պահում, որ կարծես հայ ազգի գլխի տերը լինի...»[6]:

Ռաֆֆին երևի թե Ծերենցի մասին այդպես խոսելու որոշ պատճառներ ուներ: Պատմում են, թե ինչպես առաջին անգամ «Մշակի» խմբագրատանը Ծերենցը հանդիպում է Ռաֆֆուն, որն այդ ժամանակ հոդվածներ էր գրում Մելիքզադե անունով, և գոռոզ եղանակով հարցնում.

- Դու՞ք եք Մելիքզադեն:
- Այո:
- Դուք Մելիքզադե չեք, այլ հարամզադե,- գոչում է բարկացկոտ ծերունին մոռանալով իր եվրոպական կրթությունը»:

Ռաֆֆին արհամարհանքով լռել է:

Հուշագիր Տիգրան Նազարյանը գրում է. «Մի օր «Կոմերչեսկի ռեստորան» անունով ճաշարանում երկու հսկա վիպասանները վեճի բռնվեցին, որի ֆինալը Ծերենցի Ռաֆֆիի վրա շիշ բարձրացնելը եղավ»[7]:Մի օր էլ խմբագրատանը Ծերենցը, կատաղած լինելով Վարդանի երազից, բարկացած ասում է.

-Խենթը դուն ես, որ անանկ բաներ գրել ես, ամոթ,-ասում է ու թողնում հեռանում [8]:

Ճաշից հետո Ռաֆֆին սովորություն ուներ 2-3 ժամ ոտքով զբոսնելու: Զբոսնում էր նա Ղազարոս Աղայանի հետ, որի հետ մի տարօրինակ զույգ էր կազմում: Աղայանը հաղթանդամ, բարձրահասակ, արագ քայլերով, իսկ Ռաֆֆին փոքրամարմին, գդակը աչքերին քաշած, հանգիստ քայլերով:

---

[6] Ալ. Շիրվանզադե, Կյանքի բովից, Ե., էջ 132-133:
[7] Ռաֆֆին ժամանակակիցների հուշերում, Ե., 1986թ., էջ 207:
[8] Նույն տեղում. էջ 60:

Մի անգամ Աղայանը և Ռաֆֆին Շիրվանզադեի և Պռոշյանի ներկայությամբ վեճի են բռնվում ինչ-որ խնդրի շուրջ և որոշում են վիճել գրավոր: Բանը հասնում է նրան, որ «Արծագանք» շաբաթաթերթում բանակռիվը հասնում է հայհոյանքների՝ էլ «Համադանի էշ» , էլ «Ավարայրի ավանակ» , էլ «Սալմաստի խաչագող»:

Ռաֆֆին խիստ էր արտահայտվում Աղայանի երկերի մասին:

-Այդ տեսակ տետրեր կարող է գրել Ներսիսյան դպրոցի ամեն մի աշակերտ,-իսկ այդ ահագին մարդուց ավելի բան պետք է պահանջել,-ինչ ուզում եք ասեք, Աղայանցը վիպասան չէ, այլ մանկական գրող...[9]

Ռաֆֆին հեգնաբար էր խոսում նաև Պռոշյանի մասին՝ նրան անվանելով «Աշատարակ գյուղի դավթարչին»:

«Նրա դավթարի մեջ ինչ ասես կա, բացի բանաստեղծությունից»,-ասում էր Ռաֆֆին: Աղայանին և Պռոշյանին Ռաֆֆին համարում էր «Աբովյանի անշնորհք հետևորդներ»:

Բոլոր ոտանավոր գրողների մեջ Ռաֆֆին ընդունում էր միայն Դուրյանի, Պեշիկթաշլյանի և Գամառ-Քաթիպայի բանաստեղծ լինելը: Առանձին համակրանքով էր խոսում Դուրյանի մասին: Հետաքրքիրն այն է, որ թե Դուրյանի, թե Ռաֆֆու համար գրիչն է եղել ապրուստի միջոցը: Դուրյանը իր թատերգությունների առթիվ ասում էր, թե «Ստակը չեմ ատեր, բայց գրիչը կսիրեմ»:

Ռաֆֆին օրական աշխատում էր 16 ժամ, երբեմն էլ՝ ավելի: Իսկ երբ նրան թախանձում էին, ասում էր. «Երբեք, այն օրը, որ գրիչս մի կողմ դնեմ, կմնամ անոթի»:

Որ Ռաֆֆին անց է կացրել նաև անոթի օրեր, փաստ է: Իսկ թշնամիները պնդում էին, թե նա բանկում ոչ պակաս 20 հազար ունի: Այս մասին Շիրվանզադեն ասում է Ռաֆֆուն, իսկ վերջինս ժպտալով գոչում է.

«Ես շատ ուրախ եմ, բայց իմ թշնամիները չե՞ն ասում, թե չեկը ում մոտ է»[10]: Այնուհետև ավելացնում է. «Թող իմ թշնամիները հավատան, որ ես հարուստ եմ. դա նրանց ավելի կտանջի, քան եթե համոզված լինեին, որ ես աղքատ եմ»[11].

Թեև Ռաֆֆին նյութական անապահով դրության մեջ էր, բայց նա էլ Դուրյանի «հանգույն իր գրիչ կսիրեր», մտահոգված էր իր գործերի ճակատագրով: Գրեթե բոլոր վեպերը կիսատ էին, անմշակ, այդ էր պատճառը, որ նա անհանգիստ աշխատում էր:

---

[9] Նույն տեղում, էջ 59:
[10] Նույն տեղում, էջ 31:
[11] Նույն տեղում, էջ 32:

-Գիտեք,- ասում է Ռաֆֆին Շիրվանզադեին,- ես շտապում եմ իմ թերի գործերը ավարտել, ո՞վ գիտե, կարող է մի բան պատահել, ի՞նչ կլինեն իմ վեպերը, եթե ես վաղը մեռնեմ...[12]:

Ռաֆֆին ուներ ստամոքսի կատար, խանգարված էր մարսողությունը: Ուտում էր չափավոր, խմորեղեն և բուսեղեն կերակուրները գերադասում էր մսեղենից: Պարսկաստանից իր հետ բերած Գրիգոր անունով ծառան պատրաստում էր արևելյան փլավներ՝ նուշով, քիշմիշով, մսով կամ ճուտերով, տակը փռած և տապակած լավաշով կամ ծվածեղով:

Խմում էր նույնպես շատ չափավոր: Ճաշից առաջ մի փոքրիկ բաժակ օղի, ճաշի միջոցին՝ մի կամ երկու բաժակ գինի: Երբեմն գարեջուր էր խմում, բայց շատ հազիվ և շատ քիչ: Այս առիթով Շիրվանզադեն մի ուշագրավ դեպք է պատմում: Մոտ քսան հոգով, այդ թվում և Ռաֆֆին, գնում են Օրթաճալա քեֆ անելու: Ճաշկերույթի ժամանակ Ռաֆֆին նստած մնում է մի տեղում՝ գդակը գլխին, վերարկուն հագին, ձեռնափայտը ձեռքին: Հաջորդ օրը փողոցում հանդիպում է Շիրվանզադեն և ասում.

- Համա երեկ քեֆ արեցինք, է՞՝[13]:

Ռաֆֆու շռայլությունը թեյն ու մրգերն էին: Միշտ ծաղիկներ էր գնում սենյակի համար, որն էլ նրա ամենամեծ շռայլությունն էր:

Թիֆլիսի բնակարանը բաղկացած էր 2 ոչ այնքան մեծ սենյակներից, որոնք իրարից բաժանված էին փոքրիկ նախասենյակով: Մի քանի սնագույն աթոռներ, մի հատ ասիական թախտ՝ պարսկական գորգով ծածկված և բարձերով զարդարված, պատի առջև դրված մի պահարան գրքերով լի: Լուսամուտներին, հատակին ամենուր ծաղկամաններ:

Բավական մեծ գլխով, լայն, բարձր, կնճռոտ և քունքերի մոտ դուրս ցցված ճակատով, թանձր ու սև հոնքերով, խիտ բեղերով ու կարճլիկ մորուքով, սեղմված շրթունքներով, հիվանդոտ աչքերով, որոնց շղարշում էր սև կամ կապույտ ակնոցներով,- այսպիսին էր Ռաֆֆու արտաքինը:

Ժամանակին ամբոխի մեջ տարածված է եղել այն կարծիքը, թե Ռաֆֆին գոռոզ է և ժլատ: Շիրվանզադեն իր հուշերում բերում է փաստեր և ժխտում այս, բայց նշում է Ռաֆֆու մի թերությունը, այն է՝ ուներ անզուսպ լեզու իր թշնամիների նկատմամբ, չէր կարողանում արհամարհել նրանց:

«Նա քինախնդիր էր և ոխակալ, ահա՛ նրա հոգու տկար կողմը»[14],- գրում է Շիրվանզադեն:

Ռաֆֆին բնավորությամբ հանգիստ մարդ էր, գրեթե միշտ լուռ: Բայց լինում էին պահեր, երբ նա չափից ավելի զվարճախոս էր, կատակասեր: Գիտեր

---

[12] Նույն տեղում, էջ 46.
[13] Նույն տեղում, էջ 50:
[14] Նույն տեղում, էջ 65:

արևելյան մի շարք անեկդոտներ: Զվարճախոս էր միայն մտերիմների շրջանում: Օտար միջավայրում միշտ լուռ էր:

Արփիարյանը այս արտաքինից սառը թվացող մարդու մեջ տեսել է մի անսահման ջերմություն, որով ոգեկոչվում է վիպասանը:

«Թե օր մը բարեկամաբար սեղանի վրա Կախետու գինին հանկարծ մի քիչ շատ փախչի, և երևակայությունդ փոխադրվի աչքերուդ մեջ ու տեսնես, թե վիպասանը որպիսի բարեկամական գորով ցույց կուտա, այն ատեն կըմբռնես, թե արտաքուստ անտարբեր երևցած կերպարանք մը շատ տաքուկ սիրտ կկրե: Եվ վիպասան մը, որ տաքուկ սիրտ չունի, կը նմանի կնոջ մը, որ կուզե գեղեցիկ կոչվիլ առանց ունենալու աղվոր աչքեր»:

Բանաստեղծի ճակատագիրը շատ բանով է առնչվում կանանց հետ ունեցած նրանց վերաբերմունքի հետ: Թե ինչպիսի վերաբերմունք է ունեցել Ռաֆֆին կանանց հանդեպ, հուշագիրները տալիս են որոշ իմաստով հակասական փաստեր:

Շիրվանզադեն գտնում էր, որ Ռաֆֆու ձգտումները ավելի զգայասիրական էին, քան հոգեսիրական, «կանանց մասին նրա գաղափարը մերթ թեորետիկական էր, մերթ միակողմանի, գործնական»: Բայց և այնպես, Ռաֆֆին շատ է սիրել խոսել կանանց մասին: Մի անգամ Շիրվանզադեին ասել է.

-Գիտե՞ք, ես կանանց չեմ մոտենում, վախենում եմ ուժերիս վերաբերմամբ:

Թիֆլիսում Ռաֆֆին շատ քիչ կանանց էր ճանաչում: Հուշագիր Հովի. Տեր-Գրիգորյանը վկայում է, որ Ռաֆֆին սիրում էր Ռոզա անունով մի գեղեցիկ կնոջ, որն ապրում էր Ռաֆֆու հարևանությամբ, և ամեն օր նրան պատուհանից թեյ էր մատուցում:

-Ռոզա, պահիր այսպես անշարժ քո ձեռքը, թող որ ես նայեմ նրա վրա[15]:

Որ այս փաստը հակասում է Շիրվանզադեի այն կարծիքին, թե Ռաֆֆու ձգտումները ավելի զգայասիրական էին, քան հոգեսիրական, այդ ակներև է: Փաստն այն է, որ Ռաֆֆին չի շոյել անգամ Ռոզայի մազերը:

1888թ. գարնանը Ռաֆֆին հիվանդացավ թոքերի բորբոքումով: Ջատկի օրերն էին, երբ փոքր-ինչ ապաքինված, «խալաթը հագին, ցնցուղը ձեռքին ծաղիկներ էր ջրում», տեսնելով Շիրվանզադեին՝ ասում է.

-Թշնամիներս երևի արդեն տոնում էին իմ դագաղը, այժմ թող մի քիչ տանջվեն, դեռ մի քսան տարի էլ ապրելու եմ:

Այս դեպքից երկու օր հետո Ռաֆֆին մահացել էր: Այդ անձրևոտ օրը բազմահազարանոց թափորը ուղղվեց դեպի Խոջիվանքի գերեզմանոց: Հարևանները, որոնք չգիտեին Ռաֆֆու ով լինելը, զարմացել էին:

---

[15] Նույն տեղում, էջ 199: